

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ym of phr



ՅԵՐԱԿՈՒ ԽԱՐՔԵՐՈՒՄ



Օ. Հ. Պ. ԺՈՂՈՎՐԴՅԱԲԻ ԿԱՆՏՐԵԼԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՑԱՆԿԸ

391-71

0.

4-85

1926

11.9.15

25 SEP 2008
№ 1

ԽՈՐՀԻՇՎԱՅԻՆ ԴՊՐՈՅԻ ԳՐԱՇԱՐՔ № 1

25 NOV 2010

Ա. ԿՈՒՓՐԻՆ

891.41

4-96

Այ.

≡ ՅԵՐԿՐԻ =

ԽՈՐԳԵՐՈՒՄ

Թարգմ. ԱՄԵՐԻ

—



А. КУПРИН

В НЕДРАХ ЗЕМЛИ

На армянск. яз.

—
—
—
—

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва, Никольская, 10.

Ա. Խ. Հ. Մ. ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ


1926

ԿԱՐԵՆԵՐԸ արամադրել և Գ. Յ. ՄԻՐԻՄԱՆՈՎԻ հրատարակչությունը.

ՏԱՐԱԾՈՒՅԹ




Բոլոր ԿԱՐԵՆԵՐԸ փորագրված են փայտի վրա



Գարնանային կանուխ առավոտ ե—զով և պարզ յեղանակ։ Յերկնքում ամպի կտոր չկա։ Արեի հրավառ գունդը նոր և դուրս յեկել, և հորիզոնի վրա դեռ ծփում են քնքույշ, վարդագույն ամպերի քուլաներ։ Ընդարձակ հարթավայրը արեի շողերի տակ փայլվում ե շաղ տված վոսկեփոշու նման։ Թավ բույսերը սրսփում են լուսադեմի զեփյուռից, իսկ ցողը ծաղիկների վրա շողում ե լինչպես ցրիկ յեկած մարդարտե մանյակ։ Հարթավայրը ծփին ե տալիս յերփներանգ ծովի նման։ Պայծառ շուշանները բյուրեղի բաժակների պես բացել են իրենց բերանը և դեմ արել հովին։ Մանուշակները իրենց կապույտ աչքերը հառել՝ կարծես կարոտ են քաշում սիրալիր զզվանքի, և զեփյուռը շոյում, փսփսում ե նրանց ականջին։ Քաղցր բուրմունքը բռնել ե ամեն տեղ։ Ամեն ինչ ձգտում ե արեին, ամեն ինչ առանձին թարմություն ե ստացել։

Քնից սթափված հարթավայրը բացել է իր ամբողջ ծոցը արևի կենսառատ շողերի տակ: Վերևում, յերկնակամարի վրա սարյակ-ները ճախրում են, ծվծվում, իսկ անհանգիստ ճպուռները վաղուց արդեն սկսել են իրենց միալար, անհոգ մեղեղին:


Լուսաբացի այդ հմայքը վրդովելով՝ ճչում ե հեռավոր ածխահանքի շշակը: Ճշում ե խոպոտ, անդադար, ասես թե գալարվում ե ինչ վոր ցավից: Նրա ձայնը մեկ նվազում, կուլ ե գնում գետ-



նի տակ, մեկ դուրս պը ծնում ավելի թափով, ավելի անզուսպ: Հսկա, կանաչին տվող հարթավայրի հեռավոր ափին միայն մի հանք կա, վորի սև ցանկապատերն ու դաժան վիշկաները վկայում են մարդու և մարդկային աշխատանքի մասին: Յերկար, կարմրածոր ծխնելույղները փնչում են՝ առանց մի բոպե հանգստի, վիժելով ծխի վիթխարի խրձեր: Հեռվից լսելի են մուրճերի հաճախակի զարկերը, յերկաթի զնդոցը և շղթաների հարատես շառաչը:

Հենց հիմա պետք է կատարվի ածխափորների փոխարինումը, հերթապահ բանվորների խումբը իջնելու յե հանքը՝ մյուսներին դատար տալու համար: Հարյուրավոր մարդիկ խոնվել են հանքի բակում, վորի պատերը կաղմվել են ածուխի թմբերից: Սկ, ածխակուր, շաբաթներ շարունակ անլվա գեմքեր, ամեն տեսակի և գույնի ցնցութիւններ, պատառոտված տրեխներ, հնամաշ գոտնամաններ, կրկնատիւններ, կամ ուղղակի բորիկ վոտքեր,—այս բոլորը միախառն-կոշիկներ, կամ ուղղակի բորիկ վոտքեր,—այս բոլորը միախառն-ված՝ կազմել են խայտաբղետ մի զանգված:

Բայց քիչ քիչ՝ բազմությունը նվազում է: Մարդկային զանգվածը հոսում է դեպի մի նեղ դուռ, վորի ճակատին կպցրած ե մի տախտակ՝ «Ճրագարան» մակագրությամբ: Ճրագարանը լիքն ե բանվորների խիտ խմբերով: Տասը մարդ անդադար ձեթ են ածում ցանցավոր պահպանակների մեջ դրված ճրագները և դարսում սեղանին:



Ամեն մի հանքափոր, ճրագը ստանալով, անցնում է մի ուրիշ սենյակ, ուր գրում են նրա անունն ու ազգանունը, իսկ յերկուսը խնամքով խուզարկում են, վոր մի գուցե բանվորները իրենց հետ հանքը տանեն ծխախոտ, լուցկի:


Զգտնելով արգելված նյութեր, կամ ավելի ճիշտ՝ չկարողանալով գանել, խուզարկուն գլխի թեթև շարժումով կտրուկ ասում ե—«անցիր»:

Յեվ այդ դեպքում միայն՝ հանքափորը անցնում է գլխավոր միջանցքը:

Միջանքում յեռում են փոխարինվող բանվորների խմբերը: Այստեղ փորված ե քառակուսի մի հոր: Հորի միջից մարդկային

բեռով բարձրանում ե յերկաթե մի զամբյուղ, վորին զուգընթաց, դղթալով յերկրի խորքն ե ալանում շղթայակապ մի ուրիշ զամբյուղ՝ իր հետ տանելով նույնպես մարդկային բեռ։

Հսկա զամբյուղ՝ ասես թե հրաշքով՝ դուրս ե թուչում յերկրի



տակից, իր հետ բերելով վագոնեաներ, վորոնց մեջ զեռ խոնավ են ածուխի նոր պոկված կտորները։ Մի ակնթարթում բանվորները աշտարկում են զամբյուղ և քշում վագոնեաները դեպի բակ։ Դաշտարկած զամբյուղը իսկույն լցվում ե մարդկանցով։ Յելեքտրա-

կան զանգի միջոցով տրվում ե ազդանշանը, և զամբյուղը սոսկալի գլուխոցով ցած ե նետվում ու կորչում աչքից, թաղվելով յերկրի ծոցը։

Անցնում ե մեկ, յերկու րոպե։ Տիրում ե լուսթյուն։ Շաչում միայն ճախարակները և ճոնչում մագլցող շղթան։ Դուրս ե գաւառ մյուս զամբյուղը—բայց արդեն բերում ե վոչ թե ածուխ, վյլ թաց, սև, ցըտից գողացող մարդկանց խմբեր, վորոնց կարծես դուրս ե փղձկել ստորյերկրյա աշխարհ՝ սոսկալի ուժով։

Յեկ մարդկանց ու ածուխի այդ փոխառվոխ արտավիժումը կատարվում ե գեռ յերկար, արագ, միորինակ՝ վորպես վիթխարի մեքենական մի ընթացք։

Վայսկա կոմակինը,—կամ ինչպես հանքավորներն եյին սիրում անուններին պոչ կցել, —Մողեսը՝ կանգնել եր քառակուսի հօրի բերանի մոտ, վոր մերթ մարդիկ, մերթ ածուխ եր փղձկում, և զարմանքով, բերանը կիսախուփ՝ դիտում եր վիհը։

Վայսկան տասներկու տարեկան մի տղա յեր՝ ածուխից ամբողջովին սեացած այտերով։ Նրա անմեղ, կապույտ աշքերը կանում եյին ամեն ինչ հետաքրքրությամբ։ Նրա սեակուր դեմքի վրա քիթը մի փոքրիկ, մըոտ վիշկա յեր։

Վայսկան ել ե հիմա իջնելու հանքը, բայց նրա խմբի մարդիկ գեռ չեն հավաքվել, և նա սպասում եր։


Ընդամենը կես տարի ե, ինչ յեկել ե նա մի հեռավոր գյուղից։ Գեռ մինչև հիմա նա չի ընտելացել ծանր աշխատանքին և հանքավորների սովորություններին ու կենցաղին։

Հանքի դաժան ու բարդ աշխատանքը ճնշում եր նրան, և նա հանքը պատկերացնում ե մի ինչ վոր ստորյերկրյա մոայլ աշխարհ, վոր լիքն ե թաքուն ուժերով ու սարսափներով։ Այդ աշխարհում, նրա կարծիքով, ամենից խորհրդավորը, անկասկած, մեքենավարն ե։

Ահա նստել ե նա կաշվե կեղառտ բաճկոնը հագին, թավ միւրուքով և քթին վոսկե ակնոցներ։ Նա շարունակ ծխում ե։ Վայսկան դիտում ե նրան տպակյա փեղկից։

Այդ ինչ տեսակ մարդ ե։ Բայց նա մարդ ե արդյոք։ Ահա նա, անշարժ նստած, ծխամորճը շարունակ բերանին՝ ուղղում ե լծակ-

ները, և մեքենան սկսում ե դղբդալ։ Զամբյուղը շղթաների շաշյունով, ցնցելով ամբողջ փայտաշեն տախտակամածը, կատաղի արագությամբ ցած ե սլանում դեպի հորը։ Զարմանք... իսկ ինքը նստել ե և ծխում ե նորից, վորպես թե վոչինչ չի պատահել։ Ուղ-



դում ե նորից մի ուրիշ լծակ, կցում պողպատե բանալին—և մի ակնթարթում ամեն ինչ լուսում, քարտում ե։

— Դուցե նա կախարդ ե, —մտածում եր Վայսկան, զգալով գաղտնի մի սարսուռ։

Կար նաև մի ուրիշ խորհրդավոր և մեծ իշխանություն ունեցող մարդ, —դա՝ ավագ հանքափոր Պավել Նիկիֆորվիչն եր։ Նա տեր ու տնօրեն եր ստորյերկրյա խոնավ, խավար թագավորության, ուր ցաք ու ցրիվ պեծին են տալիս աշխատող բանվորների ճրագները։ Այդ մարդու հրամանով ե, վոր փորվում են նոր միջանցքներ և կառուցվում պատնեշներ։

Բայց Վայսկայի կարծիքով, մեքենավարից և ավագ հանքափորից ավելի ազգեցիկ ե հանքի տեսուչը՝ Փրանսացի Կարլ Ֆրանցեկիչը։ Նա կարող ե անել ամեն ինչ, չկա մի բան աշխարհում, վոր հպատակ չլինի նրան։

— Ե՞ւ, Մողե՞ս, գալի՞ս ես թե չե, — լսեց Վայսկան մի խըռպոտ ձայն։

Նա ցնցվեց, նետվեց դեպի զամբյուղը։ Իջնում եր բանվորների այն խումբը, վորի հետ պիտի իջներ նաև Վայսկան և աշխատեր վարպետի ձեռքի տակ։ Իսկապես ասած, նա ուներ յերկու իշխանավոր։ Իվան ապին և Միշա Մախովը։ Նրանց հետ եր ապրում Վայսկան միենույն խցում և նրանց հետ ել աշխատում եր շարունակ։

Զամբյուղի մեջ Վայսկայի հետ տեղափորվեցին նաև հինգ մարդ։ Տրվեց ազգանշանը, անցավ մի ակնթարթ՝ և Վայսկան կարծես թերե առավ։

Աղմկելով և սրնթաց, իջնում եր զամբյուղը դեպի ցածը նորի ցեմենտե լերկ պատերով։

Հետո միանգամից մի թանձր խավար պատեց։ Հազիվ փայլում եյին լուս հանքափորների ճրագները։ Զամբյուղը դեռ շարունակում եր իջնել՝ մերթընդմերթ ուժեղ ցնցումներ տալով։ Վայսկային թվում եր, վոր սլանում ե վոչ թե դեպի ցած, այլ դեպի վեր։ Այդպիսի խափանք են զգում այն մարդիկ, վորոնք սովոր չեն հանքին, և զամբյուղը իջնելիս՝ նրանց թվում ե, թե շարունակում են թռչել հակառակ ուղղությամբ։ Բայց Վայսկան դեռ յերկար ժամանակ չեր կարողանում թափ տալ իրենից այդ խափանքը, չնայած վոր կես տարի հանքում աշխատում եր, և ամեն ժամանակ, զամբյուղը իջնելիս, նրա գլուխը պատվում եր և սիրտը խառնում։

Զամբյուղը սկսեց դանդաղել իր ընթացքը և կանգնեց հատա-

կին, վերևից դեպի ցած եյին հոսում ստորյերկրյա աղբյուրները, և հանքափորները շտապով դուրս եյին նետվում զամբյուղից, վոր խուսափեն այդ անձրեց:

Մի քանի բանվորներ, մոմած շապիկներ հագած, գլխներին պահպանակներ զրած՝ շտապ շտապ բարձում եյին զամբյուղը՝ լիքը վագոնետներով: Իվան ապին մեկին վողջունեց. «Բարով, Բաշո», բայց նա նրան չպատասխանեց, և խումբը ցրվեց զանազան կողմեր:


Ամեն անգամ, յերբ Վայսկան զգում եր, վոր գտնվում ե գետակ, նրա սիրտը լցում եր մի լուռ, անսաելի թախիծով:

Յերկար, խավար միջանցքները նրան թվում. եյին անվերջ չեռվից պեծին եյին տալիս ազոտ, կարմիր ճրագները, վորոնք մերթ կորչում եյին խավարի մեջ, մերթ նորից հայտնվում: Ողբ խոնավ եր, ծանր և ցուլտ: Քայլերը հնչում եյին խուլ և տարորինակ: Յերեմի լսվում եյին պատերից թափվող ջրի կարկաչները: Այդ բոլորի մեջ Վայսկան սպառնալի, աղետալի մի բան եր տեսնում:

Վայսկան հետևում եր իվան ապորը և Մախովին:

Նրանց ճրագները որորվում եյին և աղոտ լուսավորում միջանցքի գորշ պատերը: Սնց ու դարձ անող բանվորների շվաքները մի առանձին այլանդակությամբ մազլցում եյին պատերի վրա: Ակամայից՝ Վայսկան մտաբերում եր այն արյունոտ և խորհրդավոր դեպքերը, վոր պատմում եյին հանքի մասին: Ահա այստեղ ե միջանցքը մի որ փուլ յեկել չորս բանվորների գլխին:

Պատմում եյին նույնպես մի ուրիշ ծերունի բանվորի մասին, վորը, շատ տարիներ առաջ, մոլորվել եր այս միջանցքներում, չնայած վոր նա գիտեր հանքի բոլոր մանվածապատ խոռոչները եր հինգ մատերի պես: Նրան զտան միայն հինգ որ հետո՝ սովից ուժաթափ և խելազար: Ասում են, վորպես թե «մեկը» նրան հրել ե զցել մոլորության մեջ և կապել նրա միտքը, վոր չկարողանա դուրս գալ: Ահա այդ անհայտ «մեկը», այդ սարսափելի խավարը անկանակած դեռ շրջում ե հանքի հորերում և կլանում մարդկանց: Բայց նրա մասին վոչ մի հանքափոր չի ուզում մտաբերել՝ վոչ զգաստ և վոչ ել հարբած ժամանակ: Յեկ ամեն անգամ, յերբ Վայսկան իր



խմբի բանվորների հետ հանքն ե իջնում՝ նա սարսափով հիշում ե այդ խորհրդավոր «մեկի» մասին, ու թվում ե թե մի ցուրտ, ծանր ձեռք սեղմում ե նրա ուսերը։

— Հը՛, Միշկա, քեֆդ վժնց ե, — հարցրեց Իվան ապին, դառնալով գեղի Մախրովը։

Մախրովը չպատասխանեց, այլ միայն զզվանքով թքեց ատամների միջից…

Մինչև աշխատանքի վայրը՝ համարյա թե մեկ ու կես վերստ ճանապարհ եր։ Յերկար ժամանակ խումբը գնում եր նեղ, խա-




վար միջանցքներով։ Յերբեմն հարկավոր ե լինում կռանալ՝ առատաղին չկպչելու համար։ Ողը ավելի ու ավելի ծանր և խոնավ եր դառնում։

Վերջապես նրանք հասան իրենց տեղը։

Այդ նեղ ու փակ տարածության մեջ աշխատելու համար հնարավոր չեր փոչ կանգնել, փոչ նստել։ Բանվորները ածուխ պոկելու համար ստիպված ելին աշխատել մեջըի վրա պառկած։ Այդպիսի աշխատանքն ավելի դաժան ե քան վորե ե այլ գործ։ Իվան ապին ու

Մախրովը քիչ քիչ հաճվեցին մինչև մեջքը, ճրագները կախեցին խոռոչում և սպառկեցին աշխատելու՝ նրա լույսի տակ։ Մախրովը իրեն լավ չեր զգում։ Նա հիվանդ եր, նրա ամբողջ մարմինը տնքում եր, ասես թե մեկը ծակոտում եր նրան։ Նրա թևերը դժվարությամբ եյին շարժվում։ Գլուխը այնքան ծանր եր, վոր կարծես արձիճով լիներ լեցված։ Բայց և այնպես հանքափորը իր ինքնասիրությունը չեր կոտրում, չեր տրտնջում և շարունակում եր աշխատել։



Լուս, կենարոնացած՝ նա խփում եր իր քլունգը ածուխի կարծը սալերին։ Ժամանակ առ ժամանակ նա կորցնում եր իրեն։ Ամեն ինչ մթնում եր նրա աշքին, ամեն ինչ թաղվում եր մշուշի մեջ— և իր խոռոչը, և ածուխի կտորները, և ընկերները, վորոնք աշխատում եյին նրա կողքին։ Նրա ուղեղը դառնում եր անզգա, բայց ձեռքերը սովորականի նման շարունակում եյին կատարել իրենց գործը՝ խփելով քլունգը սալերին։ Իր գլխավերեր ածուխի կտորները կոտրելով՝ Մախրովը համարյա անգիտակցարար կոնակի վրա

առղում եր ավելի ու ավելի խորը՝ բաժանվելով իր ընկերներից:

Ածուխի փշուրները քլունգի հարվածներից թափվում եյին նրա քրտնաթոր յերեսին: Նա պոկում եր ածուխի ահագին կտորները և ածուխը վոտքերով դուրս նետելով, շարունակում եր աշխատել առանց մի րոպե հանգստի: Վայսկան արդեն յերկու անգամ սայլակը բարձել և դադարկել եր ճանապարհի վրա, ուր կուտակում եյին մոտակա միջանցքներից փորված ածուխը: Յերբ նա յերկրորդ անգամ վերադառնում եր՝ սարսուռով զգաց, վոր տարոնիանակ ձայներ են գալիս խոռոչից, կարծես մեկը տնքում եր ու խղխղում, կարծես թե խեղղելիս լինեյին նրա կոկորդը: Սկզբում նա մտածեց, թե հանքափորներն են կովում: Նա վախեցած կանգ առավ, բայց լսեց իվան ապոր մորմոքալի ձայնը, վոր կանչում եր իրեն.

— Ի՞նչ ես փետացել, լակոտ: Եստե՛ղ արի, շուտ:

Միշ, Մախրովը գետին եր տարածվել սարսափելի ջղածգումների մեջ: Նրա դեմքը կապտել եր, փրփուրը տվել պինդ փակածքերը, կոպերը լայն բացվել եյին, իսկ աչքերի տեղ յերեսում եյին միայն ահագին, վոլորվող սպիտակուցները:

Իվան ապին կորցրել եր իրեն, նա մեկ բոնում եր Մախրովի սառը, դողդողջուն ձեռքը և գորովախը ձայնով ասում.

— Դե՛, Միշկա... բոլ ա... խե՛լքի արի, բան եմ ասում...

Դա լուսնոտի սարսափելի տեսարան եր: Մի ահոելի ուժ շարժում եր Մախրովի մարմինը: Նա այլանդակ պըկումներով քաշկում եր գետնի յերեսին:

Նա մերթ ողակում եր մեջքը աղեղի նման և հենվում կրունկների ու զլսի վրա, մերթ տապալվում գետնին ու շարունակում թփրտալ, մերթ կծկվում եր, ծունկերը բերում մինչև միրուքը և մելթ փռվում փետացած, վորի ժամանակ սրմվում եր նրա ամբողջ մարմինը:

— Ե՞ս ինչ պատահեց, ե՞ս ինչ պատահեց...— վնթինթում եր իվան ապին վախեցած,— դե՛, Միշկա, բոլ ա... լսի՛... ախր եղ վննց միանգամից... Սպասի՛, Մողե՛ս,— դարձավնա հանկարծ Վայսկային, — դու եստեղ մտիկ տուր, յես գնամ մարդ բերեմ:

— Ապի՛, բա յես վո՞նց անեմ,— տրտնջաց Վայսկան ատամ-ների միջից:

— Շատ մի՛ խոսա: Ասում են նստի՛ պըծավ գնաց,— սաստեց իվան ապին:

Նա շտապ վերցրեց իր բաճկոնը և հագնելով վազեց դեպի միջանցքը:

Վայսկան մնաց մենակ՝ թափալ տվող լուսնոտի մոտ: Նա յերկար ժամանակ կուչ եր յեկել մի անկյունում և սարսափից սմքել, կար գամաց կամաց լուսնոտը ել չեր թափահարվում: Հետո խըռբայց կամաց կամաց լուսնոտը ել չեր թափահարվում: Հետո խըռբայց կամաց կամաց լուսնոտը ել չեր թափահարվում: Հետո խըռբայց կամաց կամաց լուսնոտը ել չեր թափահարվում:

Այժմ Վայսկան ավելի սաստիկ վախեցավ. «այս ի՞նչ ե, չի՞նի՞ թե մեռավ», մոածեց յերեխան, և այդ տպավորության տակ նրա մարմինը փշաքաղվեց: Ծնչակտուր սողալով նա մոտեցավ հիվանմարդինը գլացաղվեց: Նրա մերկ կուրծքը: Հիվանդը սառն եր, բայց դին և շոշափեց նրա մերկ կուրծքը: Հիվանդը սառն եր, բայց կուրծքը գեռ յելուում և իշնում եր՝ հազիվ նկատելի:

— Մախրովի ապի, ա Մախրով ապի, — շնչաց Վայսկան:

Մախրովը չպատասխանեց:

— Ապի, այ ապի, վե՛ր կաց: Թո՞ղ քեզ տանեմ հիվանդանոց: Ապի... — Մոտակա միջանցքում լսվեցին շտապ քայլեր: «Իվան ապին յետ եկավ», մտածեց Վայսկան թեթևացած:

Բայց դա իվան ապին չեր: Մի անձանոթ հանքափոր մտիկ տվեց խոռոչը՝ բռնելով ճրազը գլխի վերև:

— Ե՞յ, սվ կա: Թուս եկեք, շուտ, — ձչաց նա հուղումնալից և հրամայական ձայնով:

— Յեղբայր՝ նետվեց դեպի նա Վայսկան, — Մախրովին ի՞նչ վոր բան ա պասահել... պառկել ա ու վոչինչ չի ասում:

Հանքափորը մոտեցավ Մախրովին:

— Ե՞յ, Մախրով, վե՛ր կաց: — ձչաց նա, ձիգ տալով հիվանդի ձեռքը: Վե՛ր կաց՝ ասում եմ: Յերրորդ միջանցքը փուլ ա եկե, լսո՞ւմ ես...

Մախրովը ի՞նչ վոր անհասկանալի հնչյուններ արձակեց, իըռխուց, բաց աչքերը չբացեց:

— Դե՛, յես ժամանակ չունեմ զրա հետ գլուխ դնելու, — բացականչեց հանքափորը անհամբեր, — ձե՞ն տու զրան, ա՛դա: Շուտ արա, Զար սհաթ ա, կարող ա ըստի յել փուլ գա, են վախտը կսատկեք մկների պես:

Յեվ նա կորավ խավար միջանցքում: Մի քանի ըռպելից նրա վոտնաձայնը կտրվեց: Վայսկան կենդանի կերպով պատկերացնում ե ամբողջ սարսափը: Ամեն ըռպե կարող են փուլ գալ հողի ահագին զանգվածները: Փուլ կզան և կճզմեն ամեն ինչ, ինչպես հասրակ ճիճուների: Կուղենսաս ճշալ՝ բայց չես կարողանա բերանդ բանալ... Կուղենսաս թափ տալ քեզ, բայց ձեռներդ ու վոտներդ հողի տակ են մնացել... իսկ հետո՝ վրա կհասնի մահը... սարսափելի, անխնա, անխափան մահը...

Վայսկան հուսակտուր մոտ վազեց գետին տարածված հանքափորին և սկսեց բոլոր ուժով թափ տալ նրա ուսերը:

— Մախրո՛վ ապի, Մախրո՛վ ապի, դե վե՛ր կաց, — ճշում եր նա՝ ինչքան ուժ ուներ:


Նրա սուր ականջները աջ ու ձախ պատերի յետելից լսում են փախուստի խառնաշփոթ վոտնաձայներ: Բանվորները սարսափահար փախչում եյին, շտագում դեպի վեր, դեպի յելքը: Մի ըռպե վայսկան մտածում եր թողնել քնած Մախրովին ու փախչել, ազատել իր գլուխը: Բայց նույն ըռպեյին նրան կաշկանդում եր մի ուրիշ, անբացատրելի, բարդ զգացմունք: Նա նորից սկսում եր աղեղուր ճիշով ճիգ տալ Մախրովի ձեռները և թափահարել նրա գլուխը:

Բայց լուսնոտի գլուխը անզգա՝ վայր եր ընկնում մեկ աջ, մեկ ձախ, ձեռքերը նորից յետ փուփում փայտի նման: Այդ ըռպեյին վայսկայի աչքով ընկավ ածուխի սայլակը, և նրա գլուխ ծագեց մի լուսավոր միտք: Ուժերի արտասովոր լարումով նա բարձրացրեց ընկած մարմինը և բարձեց սայլակին, հետո ներս առավ կախ ընկած ձեռներն ու վոտները և սկսեց ճիգ տալ սայլակը դեպի գուրս:

Միջանցքները դատարկ եյին:

Հեռվից լսվում եյին փախչող հանքափորների վերջին վոտնա-

ձայները: Վայսկան ուժ եր տալիս վոտքերին և հազիվ հավասար կշռությունը պահելով՝ հրում եր ծանը սայլակը, նրա փոքր, ըակը ու թուլացել, թմրել եյին, չնչառությունը խզվել եր, աչքերը պեծին եյին տալիս:



Արդյոք կանգ չառնե՞լ մի քիչ, հանգստություն չտալ թեռին: «Չե՛, չե՛, չի կարելի», անխուսափելի մահը հետափնդում ե նրան, և նա զգում ե արդեն իր գլխավերելը նրա սառը թեռի բաղինումը:

ինչ լավ ե, մնաց վերջին զառիվերը, արդեն տեսնվում են
ճրագի աղոտ լույսերը, Մոտ ե յելքը:

Մարդիկ խոնվել են զամբյուղի մեջ:

Շուտ, շուտ:

Ուժերի վերջին, հուսահատական մի լարում:
Ի՞նչ սարսափ... արդեն զամբյուղը բարձրանում ե... Ահա նա
կորավ աչքից:


— Կաց, կաց...

Խոպոտ ճիշը թոշում ե վայսկայի շրթունքներից, աչքերը մթա-
գնում են, չորս կողմը ամեն ինչ փուլ ե գալիս, խորտակվում ահ-
ուելի դղրդոցով...

Վայսկան ուշըի յեկավ միայն վերել՝ արևի տակ: Նա սկառ-
կել ե վոչխարի փափուկ մորթիների վրա: Մարդիկ խոնվել են
նրա շուրջը: Մի հաստափոր մարդ շոյում ե նրան: Հանքի տե-
սուչ կարլ ֆրանցեիչը նույնպես այստեղ ե: Նա հրճվում ե սթափ-
ված յերեխայի հայացքով և նրա դաժան շրթունքները մրմնջում են
գորովալից.

— Oh, mon brave garcon! (ո՛, դու խիզախ տղա):

Իհարկե, վայսկան այդ խոսքերից վոչինչ չի հասկանում, բայց
նա արդեն նկատել ե բազմության յետին շարքերում կանգնած
Մախովի գունատ, ջղային դեմքը: Այն հայացքները, վոր այդ
յերկու մարդիկ լուռ փոխանակեցին՝ կապում ե նրանց ամբողջ
կյանքը ամուր և քնքուշ հանգույցներով:



ԼԵՆԻՆՑԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս են տեսել.

ԼԵՆԻՆ. — Պատգամեր յերիտասարդության.

ՍՈՑ-ՔԱՆԱԳԱԿԱՆ ԸԱՐՔ

Լույս են տեսել.

ՍՏԱԼԻՆ. — Գյուղացիական հարց.

Ն. ԵԼԻԶԱՐՈՎ. — Ի՞նչ վարոշեց կուսակց. XIV համագումարը:

ԿԱՍԻՄ. ՅԵՏԻՆ. — (կենսագրությունը).

ԳՅՈՒՂԱՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս են տեսել.

ԼԻՎԻՆՍԿԻ. — Գյուղատնտեսական հարկ.

ՊՈՂՅԱԳՈԼՍԿԻ. — Աստծու կամքը թե՞ զյուղատն. գիտությունը.

ՅԱԶՎԻՑԿԻ. — Մարդկային բնակարանի պատմությունը.

ՎԱՍՈՎ. — Հողի մշակումը յերաշախ ժամանակ.

ԳՄԻՏՐՅԵՎԱ. — Տգիտությունը և մահավատությունը.

ԳՈՒԳԱԿԻ. — Փորող փայտից սինչե տրակտոր:

Լ. ԻՅՈԶԵՑՈՎԻՉ. — Գեղ կանգնի գերան կկոտրի (կոռպեր. մասին).

ԲՐԱՆՍԲՈՒՐԳ. — Հնատ. կենդանիների վար. հիվանդութ.

ՍԿՈՄՈՐՈԽՈՎ. — Լին ոգնությունը հիվանդ կենդան.

ԿՐԱՎՉԵՆԿՈ. — Թե ինչպես կարելի յե զյուղում ելեքտրականություն
անցկացնել.

ԱՐԱՎՈՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս են տեսել.

ՍԵՄԱՆՃՈ. — Թոքախտ.

ՍՊԵՐԱՆՍԿԻ. — Մոր այրբենարանը.

ԲՐՈՆՆԵՐ. — Վեներական ախտեր.

ԳԻՆՍԲՈՒՐԳ. — Ցերեխ. վարակիչ հիվանդութ.

ԽՈՐՀՐԴԱՅԱՅՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս են տեսել.

ԵՍԻՊՈՎ. — Գյուղացիության պահանջները և խորհրդ. գպրոցի ծը-

րագիրը.

ԿՐՈՒՊՍԿԱՅԱ. — Լենինի պատգ. ժող. լուս. մասին.

ՏՅՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ. — Ազգային հարցը և գպրոցը.

ՀԱՍԱՐԱԿԱԳԻ ՅՈՒԹՅՈՒՆԸ Լ աստ. գպրոցում.

ԿՐԱՎՉԵՆԿՈ. — «Թե ինչպես Սաքոն կարմիր բանակային դարձավ»

(մանկ. մէջին և բարձր հաս.): «Ազգային գրադարան

ՖՈԿՈ. — «Մինիստը մեկ ժամով» (մանկ. —

պատկերազրդ):



NL0310803

ՈՐԼՈՎԵՅ, — «Ճամբորդություն» այերոպլանով» (մանկակ, տկերապու

բազարդ, միջ, հասակ):

ՄԱՄԻՆ-ՍԻՐԻԾԱԿ. — «Մոծուկի և արջի մասին» (մանկ., պատկե-

րազարդ):

ԿՈՒՊՐԻՆ. — «Ցերկովի խորքելում», (մանկ., պատկերազարդ, միջ.

և բարձր հասակ):

ՈՌԻԴԵՆ. — «Ինսեր, պահպանիր առողջություն».

ՈՐԼՈՎԵՅ. — «Քիմիկոս կուզկան». (մանկ., պատկերազարդ, միջ, և

բարձր հասակ):

ՆԵՎԵՐՈՎ. — «Խոչպես ելին ապրում արկնիկները» (մանկական, պատ-

կերազարդ):

Բ Ե Լ Ե Խ Տ Ե Ս Բ Ե Ս Բ Կ Ա Ա

Լույս հն տեսել

Մ. ԳՈՐԿԻ. — «Պատկերներ».

Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ. — «Պատկերներ».



11.995